Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

02 օգոստոսի 2024 թվական ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-96/23» ծածկագրով գնման ընթացակարգը և ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար չափիչ սարքի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-96/23» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «Ռեմ ընդ Ռեփ» ՍՊԸ-ն և 2023 թվականի հուլիսի 27-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ռեմ ընդ Ռեփ» ՍՊԸ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-96/23-01/271 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«Ռեմ ընդ Ռեփ» ՍՊԸ-ի կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները (պայմանագրի կնքման օրվանից 160 օրացուցային օրվա ընթացքում), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ռեմ ընդ Ռեփ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Ռեմ ընդ Ռեփ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**